ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
**ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

24.02.21 N 17/04/3362-21
Ձեր N

«ԼԱՅՎ ՆՅՈՒԶ ՄԵԴԻԱ» ՍՊԸ-Ի
LIVENEWS.AM ԿԱՅՔԻ
ԼՐԱԳՐՈՂ ԹԱԳՈՒՀԻ ԱՍԼԱՆՅԱՆԻՆ

Հարգելի տիկին Ասլանյան

Ձեր 2021 թվականի հունվարի 21-ի հարցման կապակցությամբ հայտնում եմ.

Հարց 1, 2, 7, 8: Այս պահին իրականացվում են համապատասխան վերլուծություններ, հավաքագրվում են հաշվետվությունները, որոնց ամփոփման գործընթացը կավարտվի 2-րդ եռամսյակում: Ուստի, տվյալ հարցերի վերաբերյալ տեղեկատվություն կարող ենք տրամադրել ավելի ուշ՝ հաշվետվություններն ամփոփելուց հետո:

Հարց 3: Հայկական թեստերով աշխատել են ԱՆ «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի և «Ինֆեկցիոն հիվանդությունների ազգային կենտրոն» ՓԲԸ-ի լաբորատորիաները:

Հարց 4: Հայկական թեստերը անցել են փորձարկում ԱՆ «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի «Ռեֆերենս լաբորատոր կենտրոնում», փորձարկման արձանագրությունը ներկայացվել է Առողջապահության նախարարություն: Թեստերի պատրաստման համար օգտագործվող բոլոր նյութերն ունեն միջազգային հավաստագրեր:

Հարց 5: Տեղեկատվության տնօրինողն Առողջապահության նախարարությունը չէ:

Հարց 6: ՊՇՌ-ի համար ՌՆԹ-ի անջատման և մաքրման տարբերակներից կիրառվել է երկուսը՝ ՌՆԹ-ի ավտոմատացված անջատման և մաքրման եղանակակը՝ ճշտությունը 96%, սպեցիֆիկությունը՝ 100%, զգայունությունը՝ 93% և ձեռքով անջատման եղանակը՝ ճշտությունը 96%, սպեցիֆիկությունը՝ 100%, զգայունությունը՝ 96% :

Հարց 9-10: Տվյալ հարցերի վերաբերյալ վիճակագրություն չի վարվում:

Հարց 11: COVID-19-ի հանդեպ բնակչության տարբեր խմբերում հակամարմինների հայտնաբերման վերաբերյալ գիտական ծրագրերի շրջանակներում իրականացվում են հետազոտություններ, արդյունքները վերլուծության փուլում են:

Հարց 12: Կորոնավիրուսի վերաբերյալ հետազոտություններ իրականացվող լաբորատորիաներում ներլաբորատոր կոնտամինացիայի դեպք չի գրանցվել:

Հարց 13: 2020 թվականին «ՀՎԿ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ-ի «Ռեֆերենս լաբորատոր կենտրոն» մասնաճյուղի վիրուսաբանական լաբորատորիան մասնակցել է Առողջապահության համաշխարհային կազմակերպության կողմից կազմակերպած որակի արտաքին գնահատման «SARS-CoV-2 հայտնաբերման» ծրագրին: Լաբորատորիան իրականացրել է 5 կույր նմուշների պոլիմերազային շղթայական ռեակցիայի (ՊՇՌ) մեթոդաբանությամբ հետազոտություններ և ԱՀԿ-ի կողմից գնահատվել է 100% ճիշտ արդյունքով: Կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) ախտորոշման նպատակով ՊՇՌ մեթոդով հետազոտություններ իրականացնող լաբորատորիաների որակի արտաքին գնահատումն իրականացվել է՝ հիմք ընդունելով Առողջապահության նախարարի 2020 թվականի հունիսի 26-ի «Կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) ախտորոշման նպատակով պոլիմերազային շղթայական ռեակցիայի (ՊՇՌ) մեթոդով հետազոտություններ իրականացնող լաբորատորիաներում որակի արտաքին հսկողության գործողությունների ստանդարտ ընթացակարգը հաստատելու մասին» N 2023-Լ հրամանը: Նշված հրամանով հաստատված հավելվածի 12-րդ կետի համաձայն 2020 թվականի օգոստոսին իրականացվել է ՊՇՌ մեթոդով (COVID-19) ախտորոշում իրականացնող Հայաստանի լաբորատորիաների որակի արտաքին գնահատման ծրագիր (ՀԼՈԱԳ): Մասնակից 14 լաբորատորիաներին միաժամանակ տրամադրվել են «կույր նմուշներ»: Ուսումնասիրության արդյունքները բոլոր մասնակից լաբորատորիաների համար համարվել են բավարար, ինչից ելնելով մասնակիցներին տրամադրվել են հավաստագրեր: Առողջապահության նախարարի նույն՝ N 2023-Լ հրամանով հաստատված հավելվածի 13-րդ կետի համաձայն՝ հետազոտական նյութի վերստուգմամբ գնահատում իրականացնելու նպատակով,

ՊՇՌ մեթոդով (COVID-19) ՀՀ-ում ախտորոշում իրականացնող բոլոր լաբորատորիաները 2020 թվականի օգոստոսից սկսած՝ պարբերաբար «Ռեֆերենս լաբորատոր կենտրոն» մասնաճյուղ են ուղեգրել իրենց կողմից արդեն իսկ հետազոտված նմուշների և/կամ ՌՆԹ-ների մի մասը: Գործընթացը կրում է շարունակական բնույթ: Աշխատանքների որակի ներքին հսկումը իրականացվում է յուրաքանչյուր հետազոտության ընթացքում:

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ
ՏԵՂԱԿԱԼ

ՎԱՀԵ ՀԱԿՈԲՅԱՆ

Կատարող՝ Գայանե Մելիք-Անդրեասյան
«ՀՎԿ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ
Հեռ՝ 010 550601